

Տրիբունին այս խօսքերս ըստըու ատեն հասանք քաղքին պարփապներուն առջին, որոնք գետին երկու կողմը երկնցած են, ու երկար միջոց տեղ ուրիշ չէնքերէ բաժնուած ըլլալով, դիւրաւ կը տեսնուին : Ասոնց առջև, գետին ձախ դին, ցամաք ելանք, ու քաղքին ծայրի շրջապատը քիչ մը գառնալով, Տրիգեմինա (Եռորեակ) դռնէն ներս մտանք, որովհետեւ կը զրուցուի որ Հռովմայ առջի Ժամանակները, իր վիճակը որոշուելու դիպուածի մը մէջ, այս դռնէն դուրս պատերազմելու ելան երեք հռչակաւոր երկուորեակներ, որոնք Ովատեանք կը կոչուին : Տրիբունը յարգութեամբ մը խոնարհեցաւ սեամքը պագաւ, ու ես հետը միատեղ դռնէն անցայ : Քանի մը քայլ որ առաջ գացինք, մէկ տեսակ սարսափով մը սկսայ դիտել այն բարձր աշտարակները, և բարձրաբերձ պարփապները, ու այն պղնձէ դռները, որոնք կարծես թէ յաւիտենական պատնէշով մը զիս իմ հայրենիքէս զատած պիտի պահէին : Տրիբունը իմացաւ իմ խռովելս, ու պատճառը դուշակելով ըստ ըստ . “ Ապահով կեցի . Հռովմ բանտ չէ, այլ մանաւանդ տաճար մըն է ուր որ տկարութիւնը պատսպարան կը գտնէ, ու թշուառութիւնը ապաւինութիւնն , : ” Այս խօսքին պարզ մտանք չմտանք, զննուորական Տրի-

բունը Ճանցուեցաւ քանի մը քաղաքացիներէ, որոնք չորս դին առին մեծ ուրախութեան նշաններով, որոնց թիւը երթալով այնչափ շատցաւ, մինչև խումբ մը ձեացաւ : Ամէն դիւն Աթենքի ու Սեղզայի անուն կը լսէի : “ Ի՞նչ աղէկ օր Հռովմայ համար, ըստ Տրիբունին, ինչպէս մեծ պիտի ըլլայ իր ժողովրեան ուրախութիւնը երբոր նոր եղած յաղթութիւններն իմանայ : — Կը խաբուիս, պատասխանեց ինծի : չէ թէ միայն պիտի չուրախանան այս յաղթութեանս վրայ, զորն որ գու այն պէս մեծ կ'ըմբռնես, այլ և ոչ փոյթը պիտի ըլլայ Հռովմայեցւոց : Դիտէ մէյմը զատնք որ չորս դին նիս առեր են, որոնց արդէն այդ լուրը հաղորդեր եմ : Իրաւ է որ կ'ախորժին . բայց ամենեին չեն զարմանար : Եւ ինչպէս կարելի է որ զարմանան : Երեկ Լուսիտանացւոց յաղթութիւնը լսեցին, այսր Աթենքին առումը, վազը ուրիշ ասոնց նման լուր մը կը հասնի իրենց . այնպէս որ բարեբալդ յախօ. զութիւնները իրենց սովորական ըլլալով, մէկ նոր տպաւորութիւն մը չներ մտքերնուն վրայ : — Հատաղէկ . բայց Աթենքին առնութիւն այնպիսի մեծ դիպուած մըն է, որուն վրայ քու հայրենակից ներդ յաւիտեանս պիտի պարծին , : Այս խօսքին վրայ մէյմը գարձաւ ինծի նայեցաւ, ժպտեցաւ, ու բան մը չցորուցեց :

(Պատմութեան համար)

ԿԵՆԵՑԱԳՐՈՒԹԻՒՆ Դ.



ՎԵՆԵՑԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ